

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԹԱՏՐՈՆ, գրականական և թատերական հանդէս, № 1: Թիֆլիս,  
ուր. Մ. Մարտիրոսեանցի և ընկ. 1893 թ.: Հրատարակութիւն Ալեք-  
սան բ Թարխանեանի: Մեծ քառածալ, 180 երկունեակ էջ: Գինն  
է 2 ռուբլի:

Այս հրատարակութիւնը խոստա-  
նում է պարբերական դառնաւլ լուս  
տեսնելով տարին երկու անգամ:

Այդ պահմանով մենք կարծում  
ենք որ թատրոնին նվիրած մի հրա-  
տարակութիւն կարող է չարատելով  
որովհետեւ, որքան էլ աղքատ լինի  
մեր թատրոնական կեանքը, բայց  
տարին երկու տեսար նրան նւիրելու  
համար նիւթ կարող է տալ նաև մեր  
այդ աղքատիկ կեանքը:

Հայ թատրոնը ունի արդէն մի  
չափանի անցեալ, որը ապարդիւն չի  
անցել ներկայիս համար: Վլսաւորը  
այն է որ Թիֆլիսում, Կովկասի թատ-  
րոնական կեանքի այդ գլխաւոր  
կենարոնում, հաւկական թատրոն  
ստեղծւէր էր Ճիշտ է, այդ քաղաքը  
ունի մեծ հայ աղքաբնակութիւն,  
բայց թատրոնի մէջ գեղարեսուը  
այնքան մեծ տեղ է բռնում, որ մի  
որոշ չափով գեղարեսուական ոչ է

պահանջւում նոյն իսկ հայ հասարա-  
կութիւնը դէպի հավական բեմը  
գրաւելու համար, մրցելով այն գե-  
ղարւեստական հրապուրների հետ,  
որ ներկայացնում է ուռւսական բեմը:  
Ազգակին լեզուի կարօտն առնելու  
համար պիտք է զեղարեստը օգնու-  
թեան գար, որպէս զի նոյն իսկ հայը  
ախորժ զգար հայերէն լսելու այն,  
ինչ նա կարող էր լսել օտար լեզով:  
օտար բեմի վրայ Արդ, այդ անհրա-  
ժեշտ պահմանը թէև ոչ լիսպէս բայց  
մի գնահատելի չափով ձեռք է բեր-  
ւած ներկայումս, այնպէս որ Թիֆ-  
լիսում մի կանոնաւոր խումբ և կա-  
նոնաւորապէս շաբաթը երկու ան-  
գամ հայոց ներկայացումներ տա-  
լու համար անհրաժեշտ (18—20,000  
ռուբլու) խոշոր ծախքից լաճախող-  
ները ինքնարերաբար տալիս են  
ամենավատ դէպքում երկու երրորդը  
կամ նոյն իսկ երեք քառարորդը և էլ

աւելին, հակած հանդամանքներին։ Իսկ դա արդէն գնահատելի արդիւնք է։

Բացի այդ՝ Կովկասի և Ռուսաստանի ալ հաւաքնակ քաղաքների և գիւղերից ումանց համար տարին մի քանի անգամ տրտղ հավական ներկացումները հասարակական կեանքի անհրաժեշտութիւն են դառած։

Ազգային հայ հասարակութեան մէջ սկսել է արտիստական ընդունակութիւնների զսման մի պրոցէս, որը պահանջում է սնունդ, խնամք և գրական զեկավարութիւն։

Մի պարբերական թերթ՝ այդ գործին նփրւած՝ մենք աւելորդ չենք համարում, և ինչպէս ասացի՞նք՝ տարին երկու աետրի նիւթ առատօրէն կարելի է գանել։

Խնդիրը ուրեմն միան նորա մէջ կարող է լինել թէ ներկայ հրատարակութիւնը որքան երաշխաւորութիւններ է տալիս այն զերը կատարելու համար, որ մեր կարծիքով նա պէտք է կատարէ իւր գործութիւնը արդարացնելու և ապահովելու համար։

Եւ ահա մենք գտնում ենք մեր առաջը դրած հասորի մէջ պակասաւոր երաշխաւորութիւններ այդ գործի համար։

Դիրքը սկսում է մի չառաջաբանով, ուր հեղինակը խօսում է թատրոնի և գեղարքատի մասին ոչ հմտորէն, ալ աւելի որպէս սիրող գործի, իր դիւնտանու, բայց ոչ բարձր գրականական և զեղարեսական զարգացումով։ Եւ որովհետեւ այդ չառաջաբանի ստորագրովը ինքը հրատարակիչն է, որը անշուշտ նաև խմբա-

գրում է իւր հանդէսը, — այդ պատճառով խմբագրական խխոս պակասութիւններով մի հանդէս է մեր առաջ դրածը։ Իսկ այդ հանդամանքը չի կարող գործին չվնասել։

Անկարեսոր չէ նկատելը որ հրատարակիչը ընտրւած էր անդամ թատրոնական կոմիտէտի 1891/92 թւականի սեղոնի համար, երբ Թիֆլիսի թատերասէր հասարակութիւնը միացաւ ընդհանուր ոժերով թատրոնի գործը առաջ տանելու համար։ բայց նա լետինը չէր ալն հերոսներից, որոնք իրանց ընտրած ընդհանուր ժողովի հեղինակութիւնը չուզցան ձանաչել և աշխատեցին հասարակական սկզբունքով սկսած գործը խախտել։ ինտրիգանի դիմելով՝ «Մուրճ»-ի ընթերցողներին ալդ նկատմամբ զուսմ ենք այն տողերին, որ տպեցին «Մուրճ»-ում 1892 թ. մարտի համարում (էջ 482—486) և մայիսի համարում (էջ 777—778)։ Ահա դրաս չնորհիւն է որ 1892/93 թւականին նախկին ժողովի տեղը բռնեց իւր ներքին բնաւորութեամբ այլ տեսակ ժողով, առաջնորդութեամբ իշխ։ Ն. Ամատունու, մի ժողով, որը ընտրեց նոնպէս մի կոմիտէտ նախկին տարւայ օրինակով, բայց որը տարւայ կիսում լուծեց՝ իրեւ հեղինակութիւնից և ոչինց զորքի մի մարմին, առանց նոյն իսկ վստահութիւն ունենալու գործերի դրութիւնը ներկայացնել իրանց ընտրւած ժողովին։ Այս կերպ գործավարութիւնովն է որ այլ ևս անհնարին եղաւ 1893/94 թւականի համար հաջոց թատրոնը տանել հասարակական սկզբունքով։ Իսկ այդ

հասցրեց հայկական թատրոնը մի խումբ վերին աստիճանի անթատրոնական կապիտալիստների կառավարութեանը 1893/94 թւականին:

Մենք կարող ենք ուրեմն համարձակ ասել, որ «Թատրոն»-ի հարատրակիւր մեր բեմին բաւական վնասնել է նոյն իսկ այդ բեմին ծառափելով: Մենք կ'ուղէինք ուրեմն որ թատրոնական դրականնութեանը նաև չվնասի՝ նոյնիսկ նրան ծառափելով:

Ներկայ գրքում զետեղւած են չորս թատերգութիւններ, որոնցից մէկը՝ Մոլիութինն է (Սկասէնի արարքները), միւսը Ֆորդ Օնէի (Դարբնապետը), երրորդը՝ դ'Անկուրի (Միւս անգամ—մենախօսութիւն), — բոլորը թարգմանական, և մէկը՝ Փառնակէսի «Բանաստեղծ» կատակվողը կը կը Պողոսի Դոցանից առաջին երկուքը արժանի էին տպագրութեան, իսկ «Բանաստեղծը» և «Միւս անգամ» պի. եսները դատարկ բաներ են: Դ'Անկուրի «Միւս անգամը» նոյն իսկ ձանձրալի դրածք է, եթէ միայն մի արտասանոր տպանդ չլինի նորա արտասանողը:

Յօդւածների մէջ մեծ տեղ են բռնում Պերճ Պռօշեանցի «Հայոց թատրոնի սկզբնաւորութիւնը Թիֆլուսում» և Ա. Հախումնանի «Թատրոն, բեմ և լեզու»: Պարոն Հախումնանի լոդւածը դուրի չէ հետաքրքրականութիւնից, բայց նա ուզենալով ինքն իրանից զերազանցել՝ մոլորութիւնների մէջ է ընկնում: Մասնաւորապէս ալ, Աղայեանցին նորիքած տղղերը մի ամօթանք կը մնան Հախումնանի համար, որը իւր լոդւածով ապացուց է տալիս թէ որքան նա նաև կեղծել դիտէ, նայած թէ քամին որտեղից է փշում:

Բացի լիշածներից՝ տպւած է 70-ական թւականներին վախճանած գերասան Գէորգ Միրազեանի կենսագրութիւնը, Ֆրէնդից բեմական պատկերներ, Գէօթէի «Աւանուններ գերասանների համար» և թատրոնական քրոնիկների արտասահմանից և Պետերբուրդից:

Բայց մի անհրաժեշտ բան՝ այն է տեսութիւն մեր հայկական թատրոնի—բացակայում է բոլորովին:

Ա. Ա.

ՅԱՅՄԱՐԻՕՆ, Կամիլլ. — «Հանրամատչելի նկարագրական աստղաբաշխութիւն» (Petite astronomie descriptive): Թարգմանեց Փրանսերէնից (4-րդ տպագրութիւնից) Տ. Յովհաննիսեան: Թիֆլիս, տպ. Պոտիննեանցի 1893 թ. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատարակչական ընկերութեան, ութածալ, 353 էջ, գինն է 1 ռուբլի:

Կամիլլ Ֆլամմարիոնի անունը պատկանում է ամենափալուն ժողովրդա-

կանացնողների անունների թվին: Այդ գիտնականը մի առանձին տաղանդ